Մարքեթինգի մասնագետ

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ապահովել ողջ մարքեթինգային գործունեության համապատասխանությունը կորպորատիվ բրենդի ռազմավարությանը, ինչպես նաև բրենդի փիլիսոփայության, ուղեցույցների ու չափանիշների ներդրումը Ընկերության գործունեության բոլոր ոլորտներում,
- Համակարգել ձայնա- և տեսանյութերի, գովազդային տեքստերի և այլ մարքեթինգային նյութերի մշակումը,
- Կառավարել կորպորատիվ առցանց ռեսուրսները (կայք, սոցիալական մեդիա) և թվային մեդիայի օգնությամբ ապահովել ՖԻՆՔԱ–ի և նրա ծառայությունների առաջխաղացումը,
- Պլանավորել, կազմակերպել և վերլուծել ավանդական և թվային մարքեթինգի և հաղորդակցության ուղղվածությամբ միջոցառումներ, համակարգել PR արշավները և գործունեությունը, պատրաստել PR նյութեր,
- Վերահսկել գովազդային BTL (below-the-line) նյութերի տարածումը ներքին և արտաքին լրատվամիջոցների օգնությամբ, ապահովել դրանց արդիականությունը և համապատասխանությունը բրենդի ռազմավարությանը և կորպորատիվ նպատակներին,
- Իրականացնել օնլայն և օֆլայն մեդիա մոնիտորինգ և վերլուծություն, աջակցել դրա բացահայտումների հիման վրա ռազմավարությունների ու պլանների մշակման հարցում,
- Ապահովել կորպորատիվ հաղորդակցության համապատասխանությունը ՖԻՆՔԱ–ի գործունեության նկատմամբ ներկայացվող բոլոր իրավական, կանոնադրական և այլ պահանջներին,
- Օժանդակել Մարքեթինգի բաժնի ղեկավարին մարքեթինգային ռազմավարությունների և պլանների մշակման և ներդրման գործում,
- Նոր հնարավորություններ գտնելու նպատակով հետևել շուկայի միտումներին ու զարգացումներին և Ընկերության առաջխաղացմանը նպաստելու նորարարական ուղիներ առաջարկել,
- Ըստ անհրաժեշտության կատարել այլ հարակից պարտականություններ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Բարձրագույն կրթություն բիզնեսի, մարքեթինգի, գովազդի, հասարակայնության հետ կապերի, հաղորդակցության կամ այլ հարակից ոլորտում,
- Համապատասխան փորձ մարքեթինգի ոլորտում,
- Հայերենի և անգլերենի գերազանց տիրապետում, ռուսերենի լավ տիրապետում. գերազանց գրավոր խոսքը կդիտվի որպես առավելություն,
- Թվային մարքեթինգի և վեբ վերլուծության սկզբունքների, գործիքների և մեթոդների իմացություն. թվային արշավների վարման փորձը ցանկալի է,
- Ստեղծագործական աշխատանքի գործընթացի մասին խոր պատկերացում, աշխատանքային փորձը հրատարակչություններում և լրատվամիջոցներում կդիտվի որպես առավելություն,
- MS Office ծրագրի տիրապետում (MS Word, Excel, PowerPoint, Outlook). գրաֆիկական ծրագրերի իմացությունը կդիտվի որպես առավելություն,
- Վերլուծական և քննադատական մտածողություն, ուշադրություն մանրուքներին և ճշտապահություն,
- Ստեղծարար մտածելակերպ և նախաձեռնողականություն,
- Գերազանց միջանձնային և հաղորդակցման հմտություններ,
- Գերակայություններ սահմանելու, միաժամանակ մի քանի աշխատանք կատարելու և ինքնուրույն աշխատելու կարողություն:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳ

Եթե Դուք հետաքրքրված եք տվյալ աշխատանքով և կարծում եք, որ Ձեր տվյալները համապատասխանում են պահանջներին, խնդրում ենք ուղարկել Ձեր ինքնակենսագրականը հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ hr@finca.am՝ նամակի վերնագրում լրացնելով՝ «Մարքեթինգի մասնագետ– անուն, ազգանուն»: Վաղաժամկետ ուղարկված դիմումները կդիտարկվեն առաջնահերթ:

ԴԻՄԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ: 11.07.2018